ՀՈԳՆԱԲԵԿ ՍՐԲԱԶԱՆԸ

ՆՇՎԵՑ Տ. ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ

Սեպտեմբերի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշվեց Ս. Էջմիածնի ավագագույն միաբան Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի հոգևոր ծառայության 50-ամյակը:

Հինգ տարեկան հասակից որբանալով՝ նա մեծացել և կրթվել է նախ Լիբանանի «Թլղոչնոց բույն», ապա՝ Երուսաղեմի որբանոցներում: 1947 թ. ներգաղթել է Մայր Հայրենիք, իսկ 1953 թ. ընդունվել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան: Եվ ահա 50 տարի է, ինչ Հուսիկ Սրբազանը նախանձախնդիր ծառայում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Շատ հավատացյալներ կարող են հիշել, թե ինչպես արդեն 83-ամյա Սրբազանը, որ շուրջ 40 տարիներ Մայրավանքում վարել է փոխլուսարարապետի, ապա՝ լուսարարապետի (1972 թվականից) պաշտոնները, մշտապես դրսևորել է նախանձախնդրություն եկեղեցական արարողությունները պատշաճ կազմակերպելու ու Մայր Աթոռի շրջափակում կարգ ու կանոնի հաստատման գործում, և այսօր էլ իր մասնակցությունն է բերում Ս. Էջմիածնի միաբանական կյանքին:

Հանդիսության ընթացքում Սրբազան Հորը շնորհավորանքի ու գնահատանքի խոսքեր ուղղեցին Վեհափառ Հայրապետը և Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

«Խորհրդային տարիներին, երբ մեր Եկեղեցին ապրում էր ծանր օրեր, միայն խորը հավատքի տեր մարդիկ էին իրենց քայլերն ուղղում դեպի Եկեղեցի: Եվ ահա Հուսիկ Սրբազանն այն երիտասարդներից մեկն է եղել, ով, ի հեճուկս տիրող կարգերի, համարձակորեն մտել է Եկեղեցի և 50 տարի նվիրումով ու ջանասիրությամբ իր ծառայությունը մատուցել Աստծուն, Եկեղեցուն և ազգին»,- բարձր գնահատելով Սրբազան Հոր նվիրյալ ծառայությունը, ասաց Վեհափառ Հայրապետը:

Ի գնահատումն մատուցած անսակարկ այս ծառայության՝ Վեհափառ Հայրապետը Հուսիկ Սրբազանին շնորհեց եպիսկոպոսական պանակ:

Հանդիսությանը ներկա էին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական առաջնորդները, Մայր Աթոռի միաբաններ՝ եպիսկոպոսներ, վարդապետներ, սարկավագներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.